

Կ Ո Յ Ր Լ *)

(Պատկերներ գիւղից)

I

Չնայելով որ ճոթեղէնի երկու խանութ միայն կար գիւղական հրապարակում, բայց կիրակոսենց Գալօինը անհամեմատ աւելի լաւ էր:

Նախ որ, Սարօնց թորոսի խանութի նման զջու դի բազար չէր. այսինքն, ամենինչ միմեանց կողքի և իրար վրայ լցրած՝ մի նեղ ու ցածլիկ ծակ.—մաստակը չթի կողքին, պապիրոսը ապակու մօտ և ձէթի տակառի առաջ. նէֆարի ու մազուտի ամաններն էլ, ներս մտնելուն պէս, քթիդ տակը:

Ո՛չ, Գալօի տղան ծառայել էր քաղաքում, մարդ էր տեսել, խանութ կառավարել գիտէր: Ճոթեղէնը կարգով, մաքուր դարսած խանութի մի մասում, առանձին, ապակէպատ դռնով բաժանմունքի մէջ. իսկ մյս միւսը՝ ծառայում էր միմիայն մանրունքի—ապակեղէն, երկաթեղէն, ուտելիք, ծխելիք. մազուտը, ձէթուն նէֆան էլ ծածկուած դռան ետեր:

Բացի գրանից, խանութի առջև գտնուող հովանուցածե պատշգամբը աւելի լայն էր, գետինը աւազ փըռած, սիւները հարթ գոնաւորած. իսկ դռան կողքին Գալօի տղան խնամքով շինել էր մի երկար նստարան, վրան խոտով ու կտաւով օթոց կապած:

*) Այս, նախընթաց և յետագայ պատկերները, թէն միմեանցից անկախ, բայց ոնին իրենց մէջ մի ընդհանուր կապ ՚ նեղին.

Այդտեղ էր, որ գիւղի մէջ մի պտոյտից յետոյ,
վարժապետը հրաւիրեց մեղ նստելու»

Խոկապէս տեսարանն էլ այդտեղից վատ չէր։ Ճիշտ
մեր գիւղացը, ցցւում էր շաքարի գլխի նմանող Ծաղ-
կասարը—ամենաբարձր այդ բլուրը լեռնադաշտի մէջ,
որի կրծքից գէպի վտակն էր խոնարհուել գիւղը իւ տը-
ների մէջ կղմինդրեայ տանիքներով և դլխին, իբր ան-
նման ծոպաւոր զարդ, ունէր կարմիր, դեղին և կա-
պոյտ շերտերից խառն մի ստուեր, որ վայելզօրէն նօ-
սրանալով ծայրերից, գոյնզգոյն երիզներ էր դնում պու-
րակի կողերին, համնում—գգւում էր ամենաբարձր կէ-
տին կռիթնած ժայռերը և երկնքի պարզ-կապոյտ խորքի
վրայ նկարում գեղատեսիլ գունազանութիւն (ոսառօչ)։

Ծաղկաւէտ դառիվայրի վրայ էր կանգնած գիւղը։
Պարտէզների շարքը հասնում էր մինչև դաշտը կտրող
վտակին. այնուհետեւ, ոչաւելի քան երեք վերստ լայ-
նութիւն ունեցող արտերի ծայրից ցցւում էին անտա-
ռոտ լեռների կոյտերը։

Եւ ծաղիկ, ծաղիկ. բիւրաւոր, անհաշիւ, անուշա-
հոտ ու կենսապարար։ Առաւօտեան թարմ օդի մէջ
բուրում էին նրանք արբեցնելու շափ։

Այնտեղ ուր նստել էինք, գրեթէ գիւղի կենտրոնն
էր. ցեխոտ ու ազտոտ մի փոքրիկ տարածութիւն, բա-
ցուած երեք գլխաւոր փողոցների միացման կէտի վրայ։
Հինգ թէ վեց էին խանութները. երեսում էին—դեր-
ձակ; կօշկակար, այլև մի պայտառ, որ կքուած մի ան-
կիւնում, պայտեր էր շինում։

Գիւղացիներ այդ պահուն, շատ չկային կանգ ա-
ռած հրապարակի վրայ. եղածներն էլ ցանուցրիւ կանգ-
նել խօսում էին այսայն խանութի առաջ, մինչ սայլեր
ճոճռալով, կովեր բառաշելով՝ ծանրօրէն անցնում էին
մեր առջևից։

—Ինչպէս է, հաւանում էք մեր գիւղը։

Առաջնորդել էր մեղ, ցոյց էր տուել դեղեցիկ ՄՄ-
ջակայքը, գիւղական սիրուն եկեղեցին, հրաւիրել էր

ճաշակելու սառնորակ ու անուշահամ աղբիւրների ջրերը և այժմ ուզում էր մեր տպաւորութիւնը իմանալ:

— Օ՛, այս, դրախտ է այստեղ, գոչեց ողեսրութեամբ ծերունի ընկերս—երկի այստեղ ապրով չի մեռնիլ:

Սիւնին կոյթնած և մեղ ականջ դնող Գալօի որդին և վարժապետը ծիծաղեցին:

— Զի՞ մեռնիլ, ասաց վերջինս—ինչպէս չէ, դուք խօ տեսաք մեր գերեզմանատունը:

— Այո, բայց շատ գերեզմաններ չկային:

— Նորն է. հինը լցուել է արդէն... Հիւանդութիւններ շատ կան գիւղում, միամիտ եղէք. այստեղ էլ մարդիկ մեռնում են... և դուցէ աւելի շատ՝ բան քաղաքում:

— Ի՞նչպէս, հիւանդութիւններ այսպիսի շքեղ բը նութեան մէջ...

Վարժապետը ժպտեց, յետոյ պահ մի մելամաղձու մնաց և ծերունի ընկերոջս դառնալով, ասաց.

— Ի՞նչպէս երկում է, դուք վաղուց է որ քաղաքից դուրս չեք եկել... Այս բոլորը նոր և չափազանց սուր հակադիր է քաղաքի սեղմ օդին, փոշուն ու ժխորին... Այս. բայց մենք... չէ որ մենք ճնել ենք սրա մէջ, սովոր ենք տեսնելու այս ամենը:

— Բնական է, դիտեցի ես:

— Այո, բայց... շարունակեց նա—բայց այս բոլորը արդէն ձանձրացրել, վաղնւց ձանձրացրել է մեղ. եթէ կ'ուզէք՝ նոյնիսկ անտանելի դարձել... Զեղ նման եկուորները միայն, երբ սքանչացումն են արտայայտում, միքանի բոպէով յաջողում են հրապոյրի նշոյներ զարթեցնել մեր մէջ դէպի հայրենիքի հողն ու անտառը... Անշարժ, անկեանք գեղեցկութիւն, միշտ միւնոյն բանը՝ միւնոյն տեղում, ամեն բոպէ... Եւ վերջապէս ինչ կայ զմայլելու... ճշմարիտ է, վարդ ու ծաղիկով լի է երկիրը, բայց չէ որ փուշեր կան, որբան փշեր... Ոչ, մարդկանց կողմիցը՝ իրա կարգին—դա անհաշիւ է, ա-

հաւոր, սակայն հէնց բնութիւնը ինքն էլ փշեր է արտադրում. արիւնոտող, յօշոտող փշեր...

— Դուք յուեւտես էք. երևի մշտապէս անփոփոխ. այլև միակերպ կեանքը զգուեցրել է ձեզ:

— Այն... մշտապէս միակերպ... Սկսում է մարդնոյնիսկ ատելութիւն զգալ դէպի այդ ամենը... Մերպարտէզն օրինակ. մտնել չեմ կարող. ծնուած օրիցսնա ամեն օր աչքիս առջևն է իր սիրտ խառնող միաձեռնեամբ... Գոնէ հնար լինէր փոփոխելու, ուրիշ ձետալու նրան...

— Բարեղարդեցէք, նոր ծառեր տնկէք, մշակեցէք... Ի՞նչն է խանդարում ձեզ:

Վարժապետը գլուխը երերցրեց, յետոյ դառն ժըպիտով ձեռքը պարզեց դէպի դաշտ ու լեռ և ասաց.

— Ի՞նչ էք տեսնում այդտեղ... Անտառ, եղինիների պուրակ, յետոյ՝ ծաղիկ, ոչ թէ միքանի, այլ միքանի հարիւր տեսակ, բուրմոնքով օդը լի, թռչունների ճըռուղիւն, վտակների կարկաչ... այնպէս չէ, որ այդ բոլորը բանաստեղծական է, դրախտային... Ա՛հ, բայց, մնացէք էլի միքանի օր և կը տեսնէք թէ ինչն է խանդարում մեղ բարեղարդելու մեր սիրտ խառնող միաձեռնութիւնը... Յանկարծ մէկ էլ տեսար մթնեց ամեն կողմ, հալուած կապարի նման ամպերը եկան ծածկելու արև, երկնակամար, ապա մի խոնաւ, զգուելի անձրև, այդ անիծեալ հիւսիսից գալով, տեղաց ու տեղաց... Ո՛չ մի ժամ կամ գոնէ մի օր... Ո՛չ, այլ երբեմն մի ամբողջ շաբաթ՝ օրուգիշեր, նոյնիսկ երկու շաբաթ... Մշուշ, խոնաւ, ցեխ, ճահիճ շուրջդ, տանդ առաջ, նոյնիսկ տանդ մէջ... Եւ ամեն հրապոյր կորաւում է, ամեն զուարիթ դէմք միժագնում, ծաղիկներն էլ կարծես անհետանում են ճղփացող թացութեան մէջ, մարդիկ ջղային են դառնում, ատում բնութիւնը, ատում իրար... և խմում են, խմում... ի՞նչ արած, պէտք է վերջապէս մի բան անել մոռանալու համար, որովհետեւ

դա մէկ, երկու անգամ չէ, այլ ամբողջ տարին, ամեն տարի...

Ու լռեց, ծնօտը ձեռնավայտի կոթին կոթնցնեւ լով։

— Իզուր ես այդքան տիսուր դպյաներ փոռում մեր լեռնադաշտի վրայ, վարժապետ, խօսեց Գալօի որդին սառը, անտարբեր շեշտով—լաւ օրեր էլ ունինք... ամեն տարի խօ այսպէս չէ...

— Միշտ, շեշտեց վարժապետը — Մեր աշղ Մարտիրոսը իրաւունք ունի երբ երգել է թէ՝ «Տարին 40 օր արևի երես չի տեսնում մեր երկիրը»...

— Ինքը իհարկէ չի տեսնիլ, որովհետեւ կոյր է. Ժպտեց Գալօի որդին — բայց դէ՞ն, որ 40 օր չինի, այս բորբոք — պառուղ, ցորեն, գարի... ինչպէս կ'աճի... Դուք գրան մի լսէք, — գարձաւ նա մեզ — այսօր ինչպէս երեւում է, քէֆը տեղը չի։

Այս բոլորը մի այնպիսի տարօրինակ հեգնախառն ձեռվ ասաց նա, որ նոր միայն սկսեցի ուշադրութեամբ գննել այդ երիտասարդին։ Անհասկանալի էր, ծաղրում էր, թէ յիրաւի, դէմ խօսում վարժապետին։

Կոթնել էր սիւնին և կեցուածքի ու ժպիտների մէջ մի ինչոր, գիւղի համար անսովոր բան ունէր։

Գիւղացու նման էլ չէր։ Հագել էր մաքուր և լաւ. նոյնիսկ օսլայած շապիկ, թէև առանց վզկապի։

Չնայելով որ ակնարկը վարժապետին էր՝ աչքերի անկիւններում հաղին նշմարուող հեգնական ժպտի ծալքերավ, սակայն յաճախ դառնում էր դէպի այսայն կողմ հաւաքուող, կամ այսայն կողմից անցնող գիւղացիների, և սուր, հետախուզող, նրանց շարժմունքների միտքն ըմբռնել կամեցողի ուշադրութեամբ՝ հետևում էր հրապարակի վրայ եղածներին։

Ուզեցի խօսեցնել նրան, ըմբռնելու համար այդ տիպարը։

— Լաւ խանութ ունիք, ասացի — իսկ առեւտնորը ինչպէս։

— Ի՞ն, արեց նա արհամարհութեամբ — եթէ այս
գիւղացոց նայէինք, մեր օրը օր չէր լինիլ»

Ու խուսափեց ինձ նոյելուց:

— Պարոն Արշակը, նկատեց վարժապետը — առեւ-
տուր ունի շատ գիւղերի հետ. գալիս են ճոթ են տա-
նում և փոխարէնը իր ժամանակին իւղ, պանիր, ցորեն...
Բացի դրանից, հայրը կարողութեան տէր է, ունի հո-
ղեր, զանազան եկամուտներ...

«Եկամուտ բառը նա շեշտեց. Զգացի, բայց ձայն
չհանեցի. իսկ Արշակը ուսերը թօթուեց և առանց մի
առարկութիւն անելու՝ ակնարկը դարձրեց մի կողմը»

Մինչ այդ՝ ծերունի ընկերս, որ անշարժ նստել և
մանաւանդ տիսուր խօսքեր լսել երբէք չէր սիրում, ե-
լաւ, մօտ գնաց գիւղացիների և նրանց հետ խօսակ-
ցութեան բռնուեց:

Ահա այդ միջոցին էր, որ մի ձիաւոր, դուրս գա-
լով եկեղեցու կողմի փողոցից, կանդ առաւ հրապարա-
կի վրայ:

Նրա երեսյթը անմիջապէս շարժում յառաջացրեց
ամեն կողմ:

— Վայ, Ալեքսէյն է... ձայնեց իսկոյն Արշակը և
մի քանի բայլ դուրս գնաց դէպի ձիաւորը:

Վարժապետն էլ ելաւ ու գիմաւորեց:

Եղողը սակայն անտառապահն էր հրացանը ուսին և
փամփշտակալը կրծքի վրայ:

II

Իւրաքանչիւր պաշտօնեայ, լինի նոյնիսկ անտառի
հասարակ պահապան — և եթէ կ'ուզէք այս վերջին տե-
սակի ստորին պաշտօնեաները մանաւանդ — կարեւոր
անձնաւորութիւն է գիւղում. Պիտի գիւղացի լինել և
կամ գիւղում ապրելով թափանցել գիւղացոց ներքին
կեանքի մէջ, ըսբռնելու թէ ինչ մեծ նշանակութիւն

ունի մի այդպիսի պաշտօնեայի տխուր կամ ուրախ տրամադրութիւնը՝ գիւղացոց կեանքի համար:

Եւ գիւղացիք ամեն ջանք ի գործ են դնում միշտ ուրախ տրամադրութեան մէջ պահելու նրանց:

Այդ էր պատճառն ահա, որ հրապարակի վրայ կանդնած գիւղացիների մէջ իսկոյն մի շարժումն ընկաւ։ Դիմացի Սարօենց Թորոսի խանութից կաղնիկալ գուրս նետուեց նախ մի կլորիկ—հասալիկ մարդ և վազեց դէպի ձիաւորը։ Այս կողմից էլ Գրիշօենց Մկրտիչը, ժպիաը դէմքին՝ ցցուեց իր խանութի շէմքին, իսկ վարժապետը ժպտուն, ձեռքը պարզած՝ գնաց մինչև ձիաւորի ասպանդակի առաջ։

Զիուց իջնելուն պէս, անտառապահը շրջապատուեց։ Սարօենց Զաւադը լայն ծիծաղով պարզեց նրան իր ձեռքը և հնչեղ ձայնով կանչեց ուսւերէն։

—Այ բարեւ քեզ, Ալեքսէյ, ի՞նչպէս եղաւ որ մեղ էլ յիշեցիր...

Մտերմական և սիրալիր դէմքեր ստացան ամենքը, օգնեցին իջնելու, մէկը անմիջապէս ձին տարաւ կապեւլու և բոլորը ուղղուեցին դէպի Գրիշօենց Մկրտչի խանութը։

—Ե՞ն, գործ կայ, ասաց պահապանը—պլոտոկու (արձանագրութիւն) պիտի գրեմ։

—Այ, այ, ծիծաղեց վարժապետը—ի՞նչ է եղել, փայտ են գողացել էլի...

—Տօ, թնդ է, մէկ. ձայնեց Զաւադը—հլա մէկ դնանք մեղ մօտ զակուսկի անենք... Հը, Ալեքսէյ, գը նանք, նոր արադ ունիմ։

—Միենայն է, ժպտեց պահապանը—Մկրտիչն էլ կ'ունենայ։

—Ունիմ, իհարկէ, կանչեց Մկրտիչը—նոր գինի էլ ստացել եմ։

Յետոյ բոլորն էլ, վարժապետն ու անտառապահը ամենից առաջ մտան խանութ, մինչ կաղվիկը պահ մի հեռացաւ, խանութը իր եղբօր որդուն պահ տալու։

—Աղա, ասաց նա իր խանութի առաջ կանգնող գիւղացոց—Բախչիենց Մուրադի համար եկած կը լինի. վազէք ասէք գերանները պարտկի, մինչև մենք սրա գլուխը քիչ տաքացնենք...

Մնացի մենակ նստած խանութի առաջ և զարմացած՝ դիտում էի այդ ամենը. Բայց երկար չմնացի այդպէս, որովհետեւ քիչ յետոյ վարժապետը դուրս թըռռաւ խանութից, եկաւ դէպի ինձ և ասաց.

—Համեցէք դուք էլ, մի քիչ կը խօսենք այնտեղ. Եկողը մեր անտառապահն է:

Խանութի ետևում մի փոքրիկ սենեակ կար, ուր իսկոյն բոլորս էլ տեղ բռնեցինք մեծ—աղտոտ սեղանի առաջ։ Վարժապետը մօտ գնաց Մկրտչին ու մի բան ասաց նրան և ահա քիչ յետոյ սեղանի վրայ երևաց նախ օղի, հաց ու պանիր, յետոյ խոշոր շշերով գինի։ Ինձ ծանօթացրին անտառապահի հետ։

Գիւղի փայտ տուողն է. բացատրեց կամացուկ վարժապետը. Եթէ նրան շոյէին, ով դիտէ, ամբողջ ձմեռը կարող էր առանց փայտի թողնել դիւղացոց։ Այսինքն իհարկէ, տոմսակ ունեցողներին, նշանակած չափով թոյլ կը տար կտրելու, բայց ախր բոլորը խօտոմսակ չունէին, և վերջապէս որտեղից գիւղացին կարողանար վճարելով ունենալ տախտակացու, գերան... ծախելու փայտ... Ապրել էր հարկաւոր, ուստի և պէտք էր շոյել, ուտեցնելիսմեցնել, երբեմն էլ ափը շօշափել, խտղեցնել...

Թէև դէպի գիւղացիք անտառապահը համարձակ, գրեթէ իշխանաբար էր վարւում, բայց ինձ հետ նա համեստաբար սկսեց։ Ատամների միջով միքանի ոռուսերէն բառեր դուրս թողեց և ձեռքը տարաւ օղիի բաժակին։

Օս էր, արտասանութիւնը և սոսկալի ռուսերէնն էլ այդ ցոյց տուաւ։

—Գիտէք, դարձաւ ինձ այդ ժամանակ վարժապետը, նախապէս պահանջնելով լուսթիւն սենեակի մէջ եւ-

զողներից—Մեր Ալեքսէյը, պարօն Երուանդ, մի շատ լաւ, ընկեր տղայ է. թող ձեզ ծանօթացնեմ նրա հետ... վաղճւց նա մեր անտառների գլխաւոր պահապանն է (օբեզգութեա), բայց դեռ ոչ մի վատութիւն չենք տեսել և յոյս ունենք, որ այս անդամ էլ չենք տեսնիլ նրանից...

Պահապանը ժպտեց և գլուխը ցնցեց: Թէև հայերէն էր խօսում վարժապետը, բայց նա հասկանում էր շատ լաւ:

—Ո՛չ, ներեցէք... շարունակեց վարժապետը—ինչու ես ծիծաղում, Ալեքսէյ, սհուտ եմ ասում... մինչե օրս դեռ ոչոքի ոչ կացինն ես խլել, ոչ ցեպը (շղթան) և ոչ էլ մի էնպէս վնաս տուող պրոտոկոլ (արձանագրութիւն) կազմել... Դուք ասէք, ա խալվար, քիչ լաւութիւն էք տեսել այս մարդուց... որ մէկդ իր ուզածի չափ փայտը չի ունեցել, որ մէկիդ մերժել է էլ գերան, էլ խօրոսու *)... Այդպէս է, պարօն Երուանդ, ես չեմ ստում, Ալեքսէյը մեր բարեկամն է, խմենք առաջ մէկ նրա կենացը...

Ասաց և ձեռքի մեծ բաժակով օղին մի ումազով դատարկեց, ու երբ նստում էր՝ աւելացրեց ժպտելով.

—Անտառի մէջ, պարօն, այն եղենիների կողքին մի սքանչելի տեղ խրճիթ ունի՞ որ քէֆդ դայ... Մի օր կը գնանք քէֆի, մի լաւ գառը կը տանենք... Այնպէս չէ, Ալեքսէյ։

—Համեցէք. ասաց պահապանը և նոյն կերպով պարպեց մեծ բաժակով օղին։

Սոսկացի երբ տեսայ, թէ ինչպիսի՞ դիւրութեամբ ամենքը դատարկեցին թէյի բաժակների մէջ կէսից աւելի տեղ բռնող օղին։ Այն էլ ի՞նչ օղի։ Երբ բերանս առի մի կում—կարծեցի թէ կրակ էր, սպիրտ էր ամբողջովին։

Բանից դուրս եկաւ, որ ցորենի օղի էր այդ, դիւ-

*.) Երկար ճիշդեր, որոնցից գիւղերում ցանկապատներ են շինում յաճախ։

ղացոց պատրաստածը։ «Գիմ հացի» օվի։ Լեռնադաշտը բուսցնում էր ցորենի հետ խառն, ցորենանսան ինչ որ կանաչ հատիկ։ Նեղ տարին այդ հացից ուտում էին անգամ։ Մի գիւղացի պատմեց ինձ, որ այդպիսի հացը գլժուացնում է։ Բայց իսկապէս՝ նա արբեցնում էր աւելի վատ, քան ոգելից ըմպելիները։ Ահա այդ իսկ հացից շինած օվին էր, որ այժմ այնքան առատութեամբ խմում էին գիւղացիները։

Գիւղում գինետուն չկար, ոչ Առաջ եղել էր, բայց, որպէս վարժապետը բացատրեց, որովհետեւ շատ անկարգութիւնների, կռիւ և ազմուկի պատճառ էր դառնում, իր և քահանայի միջնորդութեամբ ու ջանքերով փակուեց։

— Իբր թէ շատ լաւ արիք, մէջ մտաւ մի գիւղացի հիմի պակաս ենք խմում, պակաս ամեն կիրակի կը ունում, ծեծկում, միմեանց հայհոյնում։

Յիրաւի, աւելի վատ էր եղել։ Ամենքն էլ խոստովանուեցին։ Առաջ գոնէ մաքրած և թոյլ օղի էին խըմում. իսկ այժմ... բայց գինետան փակուիլը իր երկար պատմութիւնն ունէր։

— Մի հարցնիլ թէ ինչու է փակուել կամ ինչպէս, պարոն, յորդորեց ինձ մի գիւղացի—փակուելն իր աստառը ունէր, օյիններ եղաւ որ...»

Վարժապետը, որ լսում էր, ոստնեց տեղիցը։

— Ինչու, ինչու ամեն բան չես պատմում, գոչեց նա—ինչու էք թուղնում որ այս մարդիկը սիսալ հասկանան... Ա՛յ, թողէք ես պատմեմ ճիշտը, ուսումնական մարդիկ են, թող դատեն...»

Եւ վերարկուն ու դլիսարկը միշտ հագին, խմած երկու խոչոր բաժակ օղիից գլուխը տաքացած՝ ոտքի ելաւ մի ճեռքին հաց ու պանիր, միւսումը օղի և թեթևակի կակազելով ասաց։

— Ա՛յ խալխար, գնեւք էլ լսեցէք...

Սենեակի մէջ գարձեալ տիրեց լուսութիւն. կարծում էին թէ վարժապետը մի նոր կենաց է առաջարկելու։

— Բատեղ, խօսեց նա—էլի կրկնում են թէ մեր միկիտանի (գինետուն) վակուելը աստառ ունի, որ օյիններ եղան... էսքանի մէկ, ախպէր. դուք ու ձեր Աստուածը, դուք չէիք որ, ձեզնից շատերը չէին որ, գիշերով եկան ինձ մօտ, խնդրեցին, ստիպեցին, պրիստաւին խնդիրը գրել տուին թէ միկիտանը կուր ա քցում, դալմաղալ... Հը*, սմատ եմ ասում...

— Զէ, ճիշտ ա, ինչի սուտ, ասաց մի գիւղացի— դէ էնա, տեսաք որ Սարօենց ձեռքն էր մնալու միկիտանը, ձեր ցեղը մէջ ընկաւ, խնդիր գրեցիք, դու էլ ուսումնարանը մէջ տեղ քցեցիր...

— Հլա տես, հլա տես... բարկութիւնից կարմրեց և ընդհատեց նրան վարժապետը—ըտէնց մի խօսալ, ա կարապետ... ինչի, ես վարժապետ եմ, թէ միկիտանչի... Իմ ինչիս էր պէտքը միկիտանը, եա ինձի ինչ...

Փոքրիկ սենեակը հետզհետէ լցում էր գիւղացիներով, Մեծ մասը երիտասարդ, նոր սերունդն էր և բոլորն էլ, առանց ուեէ բացառութեան՝ «կարտուղներով», այլ և հագուստը փոքրիշատէ եւրոպական հագուստի նմանեցնելու յաւակնութեամբ։ Ով տեղ էր գտնում—նստում էր, ով չէ կրթնում էր պատին, կամ պպզում մի անկիւնում։ Մի ինչոր կարճահասակ ծերունի էլ, որ իր սպիտակ մեծ մօրուքովը շատ նման էր հնամեայ նահապետի, զուարժ ծիծաղը դէմքին ներս խծկուեց, որսնեց տեղ, յետոյ մագլցեց լուսամուտի պատուանդանի վրայ և խոշոր վափախը ծռած, երկար փայտը ծնուտին դէմ տուած՝ սկսեց դաել։

Չնայելով որ լսում էի վարժապետի խօսքերը, բայց և զննում էի ներս մտնաղներին։ Այլազան էր ամբոխը։ Կային նոյնիսկ շէկեր, կարմիր-հրաշէկ կարմիր մաղերով երիտասարդն էլ իր դլաւկը գուրս էր ցցել երկարահասակ ու խոշոր քթով Գրիշօենց Մկրտչի ետևից և ինձ էր նայում։

Եւ այդ բոլորը տգեղ էր, խիստ տգեղ, դէմքերը դրեթէ թոռմած ու դեղնած, չոր, վաղաժամ կնճիռնեւ-

րով լի, մեծ, այլանդակ քժեր, կոպիտ և յանդուգն գժեր։ Աւելացրէք դրա վրայ և այն, որ շատ-շատերի հայեացքները արտայայտում էին քծնախառն աներեսութիւն։ Միմեանց ակնարկներ անել, աչքով-ունքով շարժմունքներ, անասելի հայհոյանքները, իբր շատ սովորական բառեր, շպրտել միմեանց, խօսքերը «համեմեր» լկաի համեմատութիւններով, այլ և ճգնել անպատճառ, թէկուզ տափակ, սրախօսութիւններ անեւլու...

Հին սերնդի մէջ սակայն, նկատեցի քիչուշատ համակրելի դէմքեր։ Եւ երբ ծերունի ընկերս էլ ներս մտնելով՝ բերաւ իր հետ գիւղացիների նոր մի խումբ—երեան եկան 5—6 ծերունիներ հին հազուստով բոլորն էլ, խոշոր փափախներ գլխներին։ Ահա օրինակ, այդ վաթսունամեայ անձը, որ մօտեցաւ, ձեռքը պարզեց ինձ և դէմքի վրայ անկեղծ սիրալիրութեան ժպիտ՝ բարի գալուստ մաղթեց։ Համակրելի էր նաև այդ միւս ծերունին, որ իր խոշոր թաթերի մէջ սեղմեց պարզած ձեռքս ու ասաց.

— Բարի լինի գալուստով, պարզն։

— Ենորհակալութիւն։

— Մենք շատ ուրախացանք երբ լսեցինք որ ձեզ պէս կրթուած մարդիկ ուզում են մեր գիւղում ապրել։ Եթէ ոչինչ էլ չանէք, ձեր այստեղ լինելն էլ մեզ օգուտ է. ասած է՝ որ հօտաւէտ մի հատ խնձորը թէկուզ, դնես կոշտ քարերի մէջ, հոտիցը նրանց էլ կը կպչի...

Պահ մի վահապետը ստիպուեց ընդհատել իր խօսքը, ներս մտնողների բարեւերի վերջին սպասելով։ Թայց երբ տեսաւ որ նոր եկողները խօսակցութեան նոր նիւթ մէջտեղ բերին, ձեռքի օղին մի ումպով և զայրացած կուլ տուաւ, հացը բերանն առաւ, մի բան մըռամըռաց քթի տակին, նստեց և բաժակը դարձեալ լցրեց։

Այնքան անկեղծ ձեռով ինձ հետ խօսող ծերունուն պատասխանել չյաջողուեց ինձ, որովհետեւ դարձեալ մի նոր խումբ ներս լցուեց։

—Պա՛, պա՛... Էս ինչքան լցուել էք ըստեղ... լուեց դռան միջից մի խօշոր ձայն և երևան եկաւ Սարօենց Թորօսի կաղլիկ ու հաստլիկ եղբայրը, համարձակ ճղեց բազմութիւնը, ձեռքը ինձ պարզեց ու ասաց.

—Խնդրեմ ծանօթանանք... Սարօեան Զաւադ:

Եւ հպարտութեամբ վիզը ցցեց ու գիւղացիներին նայեց: Կարծես ուզում էր ասել թէ՝ «Հը», ոնց է, կարծում էք չդիտեմ քաղաքացոց ձևերը»:

—Լաւ ձայն ունի, քմծիծաղով դիտեց վարժապետը:

—Ինչի չէ, ասաց կոկողավիզ կաղլիկը—երգեր էլ դիտենք...

Ու ճգնեց նստել: Տեղ չկար, բայց սրմն հրեց, նրան հրմանեց և ճիշտ դիմացս, անտառապահի կողըին խծկուեց—տեղաւորուեց:

Դեր, լայն գէմքով և յանդուգն հայեացքով մի երիտասարդ էր այդ, որ միշտ բարձրաձայն, դրեթէ գոռալով էր խօսում, ճգնում էր ցայց տալ, որ քաղաքում շատ է ապրել, քաղաքացիների գէմքը նրան անսովոր չէ, որ ինքը կոպիտ և անտաշ դիւղացիներից շատ է բարձր, անփորձ ու վախկոտ չէ, այլ որ ոչոքից վախ չունենալով, կարող է միշտ բարձր էլ խօսել:

Հագել էր մեր նման, առանց մոռանալու մէջքի և վարտիքի այլազան կարկատանները. մի ինչոր տափակ և աղտոտ «կարտուղար» կոխած մինչև ականջները, մօրուըը ինամքով ածիլած, ընշացքի ծայրերը գոռողաբար դէպի վեր ոլորած... Որից վախ ունէր. օրէնք չգիտէր, ի՞նչ է, մարդ չէր տեսել, քաղաքացոց հետ չէր նստել—կանգնել: Եւ այդ՝ նա շեշտում էր միշտ, և որպէսզի դիւղացի անտաշները չմոռանային երբէք, կրկնում էր գոռալով ու ձեռքի կարճ փայտը ուժգնօրէն իջեցնում մեղանի վրայ...

Բայց, մտնելուն պէս, սկսեց անտառապահի հետ

խօսել։—Նո՞ւ մօյէ պղշտենիէ¹⁾։ Ալեքսի, խմենք, քէֆ
անենք... ճշմարիտ է, հերթը եղբօրս է քէֆը սկսելու
և հարբելու, բայց դէհ, ոնց կը լինի որ դու մեզ մօտ
գաս և ես մի լաւ չհարբեմ... նալէյ, տօ՛ պո՛լնի նա-
լէյ...²⁾ Աղա, սարսաղ դարձաւ նա խանութպանին—
ուր ես թողել էս անտաշները ներս լցուին... քաշուէք,
քաշուէք, ի՞նչ կայ, մարդ չէք տեսել... գեղացի էք
էէ... հէնց որ մի քաղաքացի էք տեսմում... տօ՛, քա-
ղաքումը շաբաթներով ապրէք, մարդ տեսէք, որ ըդէնց
բէզ զապրոսա³⁾ ներս չսծկուէք... եա թէ չէ՝ աղա,
վեր կացէք մեր տունը գնանք. ստեղ սկի վոզդուիս⁴⁾ էլ
չկայ...

—Դէ լաւ, ձէ... ձէնդ կտրիր քիչ... կտրիր... կա-
կազեց վարժապետը կիսովին ելնելով և դատարկեց օ-
դին—թող ուրիշներն էլ խօսան...

Ու բոլորովին ելաւ։ Գինետան հարցը վիրաւորել էք
իրան։ Ուզեց նորից նոյն նիւթին դառնալ.

—Մօյէ պղշտենիէ... ինչու չէ, ճչաց Զաւադը—
բայց ուր ես էդպէս շուտ կակզել, վարժապետ. այ,
թող մէկն էլ մենք կոնծենք... ըսէնց... էս սութիլկան⁵⁾
լցրու, տօ՛... իմ հաշուին. Ալեքսէյը ողջ կենայ... էսօր
էլ միս չեն մորթել որ մի խորոված էլ անենք...

—Է՞ն էի ասում. ուշք չդարձրեց նրան և սկսեց
վարժապետը—չէ, ա խալլսլ... սպասեցէք... Կարապե-
տը ասում էր որ միկիտանը կո... կողպել ենք, որով-
հետեւ...

—Դէ լաւ, նու, աստա՛ւ⁶⁾... ընդհատեց նրան ան-
տառապահը—լաւ էք արել՝ կողպել էք. ի՞նչ է, էս պա-
կաս միկիտան ա...

—Զէ, չէ, Ալեքսէյ, ալաստօ՛յ⁷⁾... դոչեց վարժապե-

¹⁾ Յարգանքներս։

²⁾ Լեցուր, լիքը լեցուր. ³⁾ Առանց հարցնելու. ⁴⁾ օդ.

⁵⁾ Շիշ. ⁶⁾ Թող. ⁷⁾ Սպասիր.—բոլորը ոռւսելին բառեր են ա-
ղաւաղուած։

ող և թեսովը մեծ շարժում գործեց—ինչո՞ւ... թո...թող
պարզուի, շատ են խօ...խօսում...

—Աղա, կանչեց այն կողմից Հայր Աբրահամին նը-
մանող ծերունին կանացի սուր ձայնով—էս ի՞նչ ջնուդի
ժամ շինեցիք ըստեղ, ձեր տոռնը շինուի... կացէք, մէկ
մեր զօնալները խօսեն, քաղաքից են եկել, թաղա խա-
բարներ կ'իմանան...

—Համար նո՞ւ... զիջաւ վարժապետը, որ արդէն
հարբել էր—լաւ, թող պարոնները խօսան... Հըմ,
ինչո՞ւ չէ, թաղա խա... խաբարներ... Համեցէք...

Ու ձեռքի բաժակը զարնելով անտառապահի բա-
ժակին, երկուսն էլ միմեանց ժպտելով՝ խմեցին:

Առհասարակ անտառապահը քիչ էր խօսում։ Ըստ
երեսյթին՝ քաշում էր մեզնից։ Շուտով սակայն Զաւա-
դը դարձաւ դէպի նա և սկսեց ցած ձայնով մի բան
պատմել։ Վարժապետը ընկերիս հետ բռնուեց խօսակ-
ցութեան և այսպէս, խօսակցութիւնը ընդհանուրից՝
մասնաւորի դարձաւ։

—Դէս, պատմիր տեսնենք, պարոն, դարձաւ ինձ
ծերունի երեսփոխը—պատմիր նոր բաներ... ականչ մի
անիլ շատ էդ մեր ջահիների ափեղցփեղ խօսքերին։ մի
քիչ շատ են քաղաքի երեսը տեսել...

III

Այդպէս էր որ սկսեց մեր ծանօթութիւնը գիւղա-
ցոց հետ, գինետան մէջ, օղիի և գինու շիշերի առաջ։
Պաշտօնապէս միայն Սարօննց Զաւադն էր, որ ձեռքը
պարզելով, քաղաքացու նման, իր անունն ու ազգանունն
էր տուել։ Միւսները բոլորն էլ խօսակցութեան բռնուե-
ցին և ահա ամենքի հետ էլ ծանօթացանք։

Սկզբում հշոքի անունը չգիտէի։ Եւ ի՞նչ հարկ իմա-
նալ։ Կնճուտ, չոր դէմքեր էին, որ միմեանցից սակաւ
էին զանազանում։ Ամենքն էլ մեզ նայելիս՝ նախ մեր
շորերն էին զննում, ապա, խորին ուշադրութեամբ լը-

սում մեզ, դիտում մեր դէմքի գծերը, կարծես կամենալով իմանալ թէ ի՞նչ տեսակ . մարդիկ էինք մենք իսկ երբ բաւական լուռ քննել էին, կամաց-կամաց, խորամանկ, պտուտաւոր հարցուփորձերով տեղեկանում էին թէ որտեղացիներ էինք, բաղաքում ի՞նչ գործերի . տէր, այնտեղ սեփական տներ ունէինք, թէ վարձուորներ էինք, ամուսնացած, ընտանիքի տէր... և թէ ի՞նչ նըպատակով էինք դիւղ գալ ուզում—ամառանոց, քէֆի համար, թէ ուեէ գործի ձեռնարկելու, շահ սպասելու... Եւ եթէ գործի ձեռնարկելու՝ ի՞նչ էինք մտադիր անելու, օրինակ, մեղուներ ունենալ, կաղամք ցաներ, ծառ տնկել... բայց դրանք խօ բոլորն էլ դիտեն... իսկ նոր, նոր բան... ուրիշ ոչի՞նչ առայժմ։ Բայց չէ որ այդ բոլորը ոչ մի եկամուտ չէր բերիլ, մարդ դրանով միթէ կարող էր փող աշխատել... Մտադիր չէինք հարստանալ, փող շահել... Զարմանք Ուրեմն ի՞նչու էինք եւ կել. Գիւղի կեանքը ուսումնասիրելու, դիւղացոց օգտակար լինելու... ճի՞շտ էինք ասում, թէ ծիծաղում էինք իրենց վրայ... Երի քէֆի համար էինք եկել... իսկ եթէ ծառեր էինք ուզում տնկել, ուրեմն ի՞նչ հողի վրայ։ Ընկերութեամբ... ինչու չէ, որքան պիտի տնկէինք։ Հինդ-վեց հարիւր, իսկ յետոյ ծառերը հաղատիրնջը կը մնար... Ո՞վ ասես որ իր հողը, պարտէզը չտար...

Եւ այսպէս, զգուշաւոր, մանուածապատ հարցուփորձով՝ իմացան ամեն ինչ իսկ մեր տուած միամիտ, պարզ և անկեղծ ճշութեամբ, պատասխանների ժամանակ՝ դուք պիտի տեսնէիք թէ դիւղացոց մէջ ինչպիսի՞ մնջկատակ էր տեղի ունենում։ Ակնարկներ միմեանց, ժպիտներ, այլև միամիտների իրենց ճանկերի մէջ ձըգողների սարդային արտայայտութիւններ։

Ու ինչ որ, մեր մտադրութիւնները դիտենալուց առաջ վատ էին խօսել օդի, հողի մասին, վարպետօրէն սկսեցին ետ առնել. այժմ դովում էին սե, բարեբեր հողը, սքանչելի օդը, երկրի բեղմնաւորութիւնը...

Երկար չուեց մասնաւոր խօսակցութիւնը։ Միւ-
մեանց սեղմելով մեր գլխի վրայ շրջան կազմող հետա-
քրքիրները միառմի ցրուեցին։ Գիտցել էին ինչ որ պէտ-
քըն էր. մնում էր այժմ տեսնել թէ որպիսի ձեւրով
կարելի էր ոստայնն ընկած ճանճերից օդուել։ Պարզ
է—երևի մտածում էին նրանք—անշուշտ ճանձրացած
քաղաքից, փող ունին և եկել են ինչոր երազներ իրա-
կանացնելու... գուցէ և, ով գիտէ, նոր ձեռնարկու-
թիւններ պիտի անեն և առայժմ ծածկում են... Յամե-
մենայն դէպս իրենց պէտք էր զգոյշ, աչալուրջ մնալ և
որսը ձեռքից չփախցնել... Այն մէկը—ծերունին, միա-
միտ մարդ էր երևում. նրան խաղացնելն ու խաբելը
դժուար չէր. իսկ այս միւսը գեռ լուռ էր, բիշ էր խօ-
սում, բայց չար մարդ էր նկատում...

Եւ այս բոլորը ես ոչ միայն միառմի կարդում էի
նրանց դէմքերի վրայ, հասկանում էի վարմունքներից,
այլև մէկ-մէկ էլ ականջիս էին հասնում հատուկտոր
դատողութիւններ, նկատողութիւններ, որոնց դժուար չէր
կցել և որոշ եղրակացութեան հասնել։

Մերունի ընկերոջս անունը իսկոյն «պապաշա» դը-
րին։ Անողը Զաւադն էր։ Համարձակ և շատ շուտով
մտերմացաւ նրա հետ, միասին իսմեցին, իրար ծիծաղե-
մի պատմութիւններ արին։

Ու իսմում էին։ Հարբել էին շատերը, իսկ մի ինչ-
որ գլուխը կախ և քիթը միշտ կարմիր պարոն էլ—պա-
րոն ասացի, որովհետեւ ճգնում էր նա այդպէս ցոյց
տալու իրեն—անընդհատ դինի էր իսմում, շիշեր դա-
տարկում։

Երեսփոխը միայն նստած մնաց ինձ մօտ. միւսնե-
րը հեռացան և խմբեր կազմեցին։

— Այդպէս... արեց ծերունին, մի վայրիեան լուռ
խորհելուց յետոյ—ուզում էք գուք էլ մեղ նման մեր
հողը մշակել... եթէ իմանամ որ քէփի համար է, ա-
մառը հէնց անցկացնելու—խօսք չունիմ. բայց, եթէ
ուզում էք շահուել... Սահակենց Մանուկը ձեղ, օրի-
նեկտեմբեր, 1904.

նակ, չի խօսել մեր հողի, մեր մարդկանց կամ օդի մասին...

—Խօսել է, ասացի ես—մարդիկը վատ չեն երևում, հողն էլ լաւ է թւում, իսկ օդը, ասում են, որ անձրեւային է:

—Անձրեայինը իրա կարգին, բայց ասել է, որ մեր հողը առանց լնու, շնորհած լաւ ազբելու՝ բան չի բուացնիլ, որ անձեւը կարճատե ամառը...

Բայց Զաւադը, որ երեխ աննկատելի՝ լսում էր մեզ, ականջը մեր կողմն էր, յանկարծ ընդհատեց ծերունուն և դոչեց.

—Ինչի՞ ես էդպէս խօսում, ամի. ինչի, մեր հողի ի՞նչն ա... պակաս բան ա բուացնում՝ որ բէջարես *)... բաս էսքան ծաղիկները, անտառը, ջուրը... ճիշտ չեմ ասում, պապաշնա:

Ընկերս ծիծաղեց և ասաց.

—Դէ իհարկէ. մենք էլ խօ տեսնում ենք... Եւ վերջապէս ի՞նչ կայ, աղբ բիշ ունիք. ամբողջ գիւղը—ինքը միթէ հէնց աղբի մէջ չի նստած...

Շատերը ծիծաղեցին, սրախօսութիւն համարելով: Զաւադը ամենից բարձր քրքջաց, մինչ մի գիւղացի մօտեցաւ ծերունի խրատչին և ասաց.

—Ամի, քաղաքացոց սիրտն ի՞նչի ես կոտրում. իրենք խօ մեզանից լաւ գիտեն, թող տեսնեն, էլի:

—Բան չեմ ասում, ի՞նչ եմ ասում, շփոթուեց ծերունին—եանի ասում էի, որ առաջուց իմանան...

—Էդքո ի՞նչ բանն ա... կանչեցնը վրայ Զաւադը—քո հողը լաւը չի, իմը շատ լաւն ա, իմը կը տամ:

—Հա, բաս, մէկը քո հողն ա լաւ, մէկն էլ իմը:

—Դէ՛, դէ՛, ա՞նսաս **) տեղդ նստի, ձայնեց Զաւադը բարկութեամբ—մեր հողին վատ ասելը բերնիդ չի ընկել... լաւ էն ա, ամի, որ դու չխօսաս... իմ պա-

*) Որ կարողանաս, հասկանաս:

**) Անձայն

պաշան—դարձաւ նա ընկերիս—քեզնից էլ ու մեզնից
էլ լաւ գիտի... Ազը էլ որ ուղենայ, այ, մեր տան ա-
ռաջը մի սարի չափ կայ հինը, էնքան տամ որ սաղ
դաշտը ծածկի... Հուր, սրճն ի՞նչ կասես, պապաշա'

Երեսփոխը լոեց, նայեց իրեն ուղղած զայրադին
ակնարկներին, դլուխը ցնցեց, յետոյ կամացուկ ելաւ և
դուրս գնաց:

Թէև լսում էի և կիսովին դէմքս անտառապահին
էի դարձրել, բայց լաւ նկատեցի թէ ինչեր կատարուե-
ցին այնուհետև լուսթեամբ:

Ծերունուն գիւղացիները մռմոռցով ճանապարհ բա-
ցին, Զաւադը մի թունդ հայհոյանք շպատեց նրա ետևից
կիսաձայն, յետոյ միքանի երիտասարդներ դուրս գնա-
ցին նրա ետևից, դուռը խնամքով փակեցին և լսեցի
թէ ինչպէս գոռգոռում էին խանովթի մէջ:

Ելայ և ուղեցի դուրս գնալ. սենեակի օդը ծանրա-
ցել էր և արբաձների տեսքը զզուելի էր դառնում:
Բացի գրանից, հետաքրքիր էր թէ ի՞նչ էին ասում այն-
տեղ ծերունի երեսփոխին: Բայց Զաւադը երևի ըմբռու-
նեց մտադրութիւնս, որովհետև մէկն պարզուեց դէպի
ինձ մի բաժակ գինի ձեռքին և գոչեց.

—Ո՞ւր ես գնում, պարն, հիա մէկ էս բաժակով
խմիր պապաշայիս կենացը... Զես խմում, չհաւանեցի՞ր
մեր գինուն... Դէ՛, ի՞նչ անենք, մեր սարերում խաղող
չի բունսում... Հիա մէկ սպասիր, քեզ ասելիքներ ունիմ...

—Ասա, կանգ առի ես,

—Դու էդ ախմախի խօսքերին մի լսիլ. դու ջահիլ
մարդ ես, գիտես որ մարդ երբ ծերունում ա, իսելըը
քիչ պակասում ա... համ էլ դա միքիչ ընէնց էլի...

Առանց ուշը դարձնելու խօսքերին, դիմեցի դէպի
դուռը ձշմարիտ է, այնտեղ կանզնաձները ճանապարհ
առուին ինձ, բայց ջանացին խօսակցութեան բռնել. մէկն
էլ ինձնից առաջ դուրս նետուեց և երբ ես խանովթ
ելայ, այնտեղ կատարեալ լուսթիւն էր տիրում, երես-
փոխն էլ յանցանք դործածի ժպիտ դէմքին՝ ինձնայեց:

Զգացի, որ աւելորդ էր որևէ բառ արտասանել և դուրս գնացի խանութից, անցայ հրապարակն ու սկսեցի դէպի եկեղեցին ենել մենակ:

Կամաց էի քայլում Բացի այն, որ տեսածներիցս ու լսածներիցս առաջացած անախորժ տպաւորութեան տակ՝ խորհում էի, այլ և զննում էի շուրջա:

Եկեղեցուց վեր, խճուղին ենելու կէտում դիմացս դուրս եկաւ մի ինչ որ կոյր և նիհար ծերունի, որ շօշափելով ճանապարհը, զդուշութեամբ քայլեր դնելով՝ դիւղն էր իջնում:

Երբ ոտնաձայնս լսեց, պահ մի կանդ առաւ:

— Բարե, ծերնանի, ասացի ես:

Երեսիս նայեց իր բբերից զուրկ աշքերով, ձեռքի գաւազանը դէպի իրեն քաշեց և ասաց.

— Աստծու բարին... դու ով ես... Հա, զինի դու ես այն քաղաքից եկած մարդը:

— Ես եմ. իսկ դու աշըդ Մարտիրոսը խօ չես:

— Է՞ն, ի՞նչ աշըդ, քեզ մատաղ, երդ ասող ենք... ասած ունիմ—«քոյ Մարտիրոսն էլ իրան աշըդ է կարծում, երդ է յօրինում, ձայնին լսեցէք»...

— Դա խօ Զիւանիի խօսքերն են, բարեկամ:

— Այս, նա «փեղքի աշեցէք» է ասել, եսէլ «ձայնին լսեցէք»... Ո՞ւր ես գնում էսպէս, հրամանքը:

— Ոչինչ, ման եմ գալիս. իսկ դու այդ կոյր տեղով վըդ որտեղից ես գալիս:

— Էս վերեւումը մի արտ ունենք, էնտեղ էի: Ասի տեսնեմ ի՞նչպէս է բուսել:

— Տեսար, ժպտեցի ես:

Կռացայ ձեռք տուի, է՞ն, փառք իրեն, մի թզաշափ բարձրացել ա... ամա դիժ ցորեն շատ է լինելու:

— Ի՞նչպէս իմացար:

— Իմացւում ա. դիժի տերևը փայլուն, ընէնց փափուկ ա ըլում... Ըստեղ կանգնելլ լաւ չի, պարն, թէ կ'ուղես իջնենք ժամի մօտ, ընտեղ գերեզմանաբարեր կայ, նստենք ըիշ խօսանք. եա թէ չէ՝ համեցէք մեր

տուն գնանք, միասին ճաշենք... ես ուզում էի մէկ քեզ
հետ խօսալ...

—Չէ, տուն գնալը թող մնայ, բայց իջնենք եկե-
զեցու մօտ:

Կոյրը փայտը պարզեց և քայլել սկսեց:

—Թող թեդ բռնեմ և տանեմ քեզ մօտեցայ նը-
րան:

—Հա... շնորհակալ եմ, բռնիր...

Եւ երբ թեկիցը բռնել քայլում էինք, ձեռքովը
բռնեց մի ձեռքս ու ասաց.

—Թող մէկ հլա ձեռքդ շօշափեմ... ես մարդու
ճանաչում եմ իրա ձեռքիցը... տեսնեմ.. Հա, երեսում
ա որ աիսէր¹⁾ ես եղել...

—Ի՞նչպէս իմացար:

—Իմացայ էլի... Ա՛յ, աջ ձեռքիդ միջամատը+դրի-
չը խօ նրանով ես բռնում—ծայրի վրայ կաշին կոշտա-
ցել ա... ամա չար բնութեան տէր մարդ էլ ես երե-
սում... ընէնց էլի, հեշտ բարկացող...

—Դա ինչպէս իմացար...

—Ինչի... ես խօ միշտ կոյր չեմ եղել... էհ, Աս-
առած բալքի պատժեց ինձ, ով ա իմանում. առաջ ես
էլ աչքեր ունէի, սեղ սպիտակից ջոկում էի, դրում էի
—կարդում... Ա՛յ, նրանից իմացայ, որ գրելիս զրելը
պինդ, շատ պինդ ես հուպ տալիս, ընտուր էլ կաշին
քար ա կտրել...

—Յետոյ, հուպ տալը միթէ միայն չար մարդը
կարող է:

—Չէ, բայց ընէնց, թունդ ես դրելու ժամանակը,
էլի... Հար, Աստուածդ սիրես, դու բաղաքումը ի՞նչ
գործի էիր:

—Վարժապետի նման բան:

—Հա... լաւ բաս, ամառս եկել ես մեր գիւղը
անցկացնես, էլի... Զհասմնք հալա... Հա, համա հրէս

¹⁾ Գրագիր:

Ժամի կողքի մեծ քարը... Այ, գնանք դէնը, էն միւս
կողքին...

— Յաբէթ աղայի գերեզմանի մծտ...

— Հա, նրանից քիչ հեռու... Գիտես, էդ Յաբէթ
աղան իմ ախպէրն էր... օղորմի հոգուն...

Յիշեցի Սահակեանի պատմածը և լուռ մնացիւ
Ապա, երբ տեղաւորել էի ծերունուն ապառաժի մի
կտորի վրայ, որ երեկի իբր գերեզմանաքար նետուած
էր այդտեղ, ինըս էլ նստեցի կողքին:

— Թէ ծխում ես՝ ծխիր, ասաց կոյրը — ես բռնօ-
թի *) եմ քաշում:

Ասաց, երկար մուշտակի քղանցը ետ տուեց ու
արխալուզի գրապանից հանեց ըթախոտի փոքրիկ տուփը,
միքանի արծաթէ կտօրներով պատած գոտիի միջի կար-
միր թաշկինակով նախ քիթը մաքրեց, յետոյ փոշին
լցրեց քթածակերի մէջ, աչքերը սևեռեց հեռուն ու
ասաց.

— Հէյ գիտի հայ, աշխարհ... որ աչքերս սաղ լի-
նէր, ես կը թողայի ոս մենակ ման դաս գեղումը, գե-
ղի շների հետ կոիւ տաս... ես թէ չէ ըստե՞ղ կը նըս-
տէինք և ոչ թէ էն մեր սիրուն ձորագլուխներումը,
չոչուան ջրի, հով ծառերի տակ, էն լաւալաւ ծաղիկնե-
րի մէջ... Այս, ախ, պարոն վարժապետ, շատ, շատ կա-
րօտել եմ մեր սարերին, մեր անտառին ու ձորերին.
մէկ էլ տեսնէի, մի կուշտ, աչքով վայելէի ու յետոյ
մեռնէի ..

IV

Պահ մի երկուսս էլ լուռ մնացինք: Ծերունու անձ-
կութիւնը յուզեց ինձ նայեցի դէմքին: Բաերից զուրկ
աչքերը լցուել էին արցունքով և դէմքը կնճռոտուել:
Մատներով հուպ տուած քթախոտի կէսը նա դար-

*) Քթախոտ:

ձեալ ներս կոխեց քթածակերի մէջ, լեցուած արցունքը
դատարկեց թաշկինակով, յետոյ, երեկի աւելի սովորու-
թինից՝ քան ցրտից - ծածկեց մուշտակի քղանցքով
ծնկները և ասաց.

—Ես միշտ խօ այսպէս չէի... Ե՞ս էլ մի ժամանակ
զօշաղ տղամարդ՝ չափչփում էի մեր անտառները. գոր-
ծը վախենում էր ինձնից .. իսկ այժմ, ի՞նչ եմ ես...
մի ուրուական, որ պտտում եմ գիւղում և սրտիս նե-
ղութիւնից, բարկութիւնից՝ երգեր երգում.—

Է՛հ, կոյր երգիչ, տխուր ստուեր անցեալի,

Դու մեղ երբէք դուարթ երգեր չես տալի.

Օրը խաւար քեղ համար, արեն անփայլ քեղ համար.

Նատ ապրեցիր—այս աշխարհ թնդ, հալուի...

—Քո գրածն է, հարցըրի ես:

—Խ՛մ... Այսպէս շատերը ունիմ. ասում եմ՝ գրում
են... Է՛հ ի՞նչ անեմ, տղէտ մարդ եմ, երգերս էլ տղէտ,
անտաշ՝ ինձ նման... Է՛հ, քիչմիչ կարդացել եմ, լոյս
դառնայ Սարդիս վարդապետի հոգին—նա է ինձ դա-
տուել:

—Վաղուց է որ կոյր ես:

—Տասը տարուց աւելի... Զիուց ընկայ, յետոյ եր-
կար հիւանդ պառկեցի և երբ ուղի ելայ—կոյր էի...
Է՛հ, փառը իրեն, նրա կամքը համբաթ այդպէս էր...
Դէհ, բայց, հերիք է իմ մասին. մի քիչ էլ դռւ ասա...
Եկել էք գիւղը, լսել եմ, ուզում էք ըստեղ ապրել...
Վարժապետը պատմեց... Գիտես, եղբօրս որդին է:

—Այդ ի՞նչ շատ ազգականներ ունիս:

—Դիւղի կէսից աւելին... Եօթը եղբայր ենք: Գա-
լօն էլ իմ եղբայրն է, անիծուի նա:

—Այն հարուստ խանութատէրը:

—Այ՞ս... էդ ջաղացի առուն խօ գիտես—դուքան-
ներիցը ցած. ընտեղից գէնը համարեա կիրակոսենց
ցեղն է, գէսը՝ Սարօենց ցեղը:

—Այդ Ջաւադի ցեղը:

—Հա, ծանօթացամբ .. Խմող, լիրը տղայ է. քաղա-

քի, միկիտանների որդի... Ասենք մեծ եղբայրն էլ մի
բան չի. այ, նրանց հէրն էր լաւ մարդ. աղքատասէր,
բարի.. էդ ինչից ա, վարժապետ, դու կը գիտենաս —
որ լաւ հօր տղան էլ է փիս գուրս գալիս...

—Ժառանգութեան օրէնքը դեռ լաւ չէ ուսումնա-
սիրուած. ով գիտէ. շրջանը, գոյութեան կոռուի միջա-
վայրը...

Հըմ, արեց ծերունին, որ աշճանացած՝ լսում էր
ինձ - չնեղանաս, վարժապետ, բայց ասածներդ գլխու-
մըս չմտան. մէկ էլ ասես...

Նոր ուշքի եկայ, որ յիրաւի, ծերունին ոչինչ չպի-
տի հասկացած լինէր ասածներիցու Ծիծաղս եկաւ.

—Ոչինչ, ոչինչ... ասացի - ներիր որ մի քիչ խըր-
թին խօսեցի... ուզում էի ասել թէ մարդս ոնց կրթուի,
ինչ մարդկանց հետ որ նստի - կանգնի, նրանց բնու-
թիւնն էլ կը ստանայ:

—Էդ մէկը ճիշտ ասացիր... Զաւադը մեր տպա-
կանուած գիւղաքաղաքումն է մեծացել, մեծ եղբայրն
էլ այնքան խման - հարբանների հետ ունեցածը ծախսեց,
որ ըստէնց խարաբ էլաւ, գնաց... Հմի էլ, հրէն, քեօխսի
օգնական ա. աջքովդ պիտի տեսնաս թէ ոնց ա պլոկում
գիւղացոց, ոնց ա գաղանի պէս փէտը քաշում սրանրա
վրայ...

—Իսկ ձե՞ր ցեղը:

—Մեր մէջ էլ կան փսերը, ես խօ մեր ցեղը չեմ
գովում... Ա՛յ, մէկը հէնց էդ Գա'լօն... Գիտես ինչս ա.
եղբայրս ա. բայց շնից փիսն ա... էս ա տաս տարուց
աւելի, մեղ հետ խոռվ ա, թէ ինչ - նրան չես օգուտ
տալիս... Ախր ոնց տամ. մի անգամ յիմարացայ՝ փող
պարտք առի - հինգ տարի քերթեց կաշիս... Բայց էլի
մեր ցեղի մէջ մարդիկ կան. Սարօնց ցեղը:

—Հա՛, միջահատեցի ես - լսել եմ, գիւղը երկու
ցեղի է բաժանուած և երկուսն էլ իրար վաստում են...
Լաւ չէ այդ. հայկական այդ աղտոտ յատկութիւնը զըզ-

ուեցրեց։ Ախր ի՞նչ ունիք իրար հետ, միթէ չէք կա-
րող հաշտ, գոնէ առանց իրար վնասելու ապրել։

—Հըմ... արեց նորից ծերունին—Երևում ա որ
նրանք արդէն իրանց կողմն են բաշել... բայց տես
վարժապետ, կը փորձես՝ կը տեսնաս. նրանց հետ գործ
որ բռնես կը փոշմանես... թէ նրանց հողը՝ հող չի, թէ
մարդիկը՝ մարդիկ չեն։

—Լաւ, լաւ, թո՞ղ բամբասանըը ... Հաւատացած
կացիր, որ մեզ խաբել կամեցողը կը զզայ... ես լաւի
հետ լաւ եմ, վատի հետ՝ կրկնապատիկ վատ։

—Ապրես, կարգն էլ հէնց էդ ա... բայց, քեզ հա-
մար եմ ասում, լաւ կը լինի որ առուի է՞ն զրադի հո-
ղերն էլ մեկ տեսնեաւ։

—Եյդ թո՞ղ. ինձ այն ասա, թէ ինչու ձեր գիւղա-
ցիք այդքան խմում են և բոլորն էլ կարծես խօսք մէկ
են արել, որ մեզ միշտ խարուած պահեն... Մենք խօ-
իրենց վնաս տալու չենք եկել.. . Քիչ առաջ, դուքանում
երեսփոխը ուղեց գիւղի մասին մի քիչ ճիշտ բաներ ա-
սի մեզ—քիչ մնաց կտրտէին խեղճին։

Մերունին գլուխը կախ՝ մնաց մի բոպէ, յետոյ նո-
րից ինձ նայեց իր աչքերով, բռնեց ձեռքս, սեղմեց ու
ասաց։

—Ա՛խ, քեզ մատաղ, պարոն եղբայր, ինչու ես ի-
զուր եկել՝ չցաւած գլուխդ աւետարանի տակ դնում...
Մեր ջահիների հետ, Աստուած ազատի, գործդ լաւ բռնիր
հա... էլ առաջուան սերունդը չի մնացել, ոչ... զալբու-
թիւն *), սհւտ, ինչ ասես՝ քաղաքիցը լցուել է
մեր կողմը... Ա՛խ, երկաթուղին, այդ անիծուած
մաշինը բերեց բոլորը... Մեր ջահիները քաղաք շա՛տ տե-
սան, շատ .. լսիր քեզ ինչ կ'ասեմ... Ես կոյր եմ, չէ. լաւ,
որ ծարաւ ինեմ և ուղենամ բուն աղբիւրը գտնել, թէ
ցոյց տուող լինի՝ կը գտնեմ... Ոչ իհարկէ, ստիպուած
պիտի կեղտու ջրիցը խմեմ... չեմ էլ տեսնում ախր, որ

*) Խաբերայութիւն։

նա կեղտոտ է... խմում եմ, խմում՝ մինչև ծարաւս կտրի... Դէ՛, խմածս էլ ամենից շատ՝ կեղտ կը լինի, որովհետեւ կեղտը միշտ ջրի երեսին է կանգնում, միշտ աւելի շուտ է մարդուս բերնին մօտենում... Ըտէնց էլ մեր հիմիկուան սերունդը. հէնց որ քաղաք են ընկնում, ճանապարհը, աղբիւրի ճանապարհը ցոյց տուող չկայ— նրանք էլ ծարաւ, ինչ կեղտոտ ջուր տաես՝ խմում են... Այ հէնց վրաները որ նայես—կը հասկանաս: Խօ տեսմել ես ինչպէս են հագնուում, իրենց հայրերը հլա փափառվ, արխալուզով են, իրենք մէկ էլ տեսար՝ բինջակ, կարտուղ, ճոճուան կօշիկ, ձեռքին փէտ, մատանի... Ըտէնց էլ ամեն բանը. ինչ որ հայրերն են տալիս չեն վերցնում. ծարաւ են՝ բաղաքի կեղտոտ ջրերիցն են խմում. էն անիծուած տեղումը մէկ մարդ էլա չկայ՝ որ մեր տղերանցը ձեռքիցը բռնի՝ տանի բուն աղբիւրի մաքուր ջրին...

— Այդ ձեր հայրերիդ պարտքն է. ինչու չէք կըրթում, լաւ կողմը ուղղում նրանց:

— Հըմ... ուղղել, սովորեցնել. . Տօ հիմիկուան աշխարհը այլ է, այլ. հիմիկուան որդիքը ոչ իրենց հօրնեն մարդատեղ դնում, ոչ էլ թողնում որ նրանք մի խօսք տաեն: Հրէն, երեկ երեկոյ չէր, որ լսում էի թէ ինչպէս եղբօրս որդին իր հօրը վրայ գոռում էր թէ՝ պինչ ես հաջում քեաֆտառ շան պէս, դարաշի կտրել դլիսիս...

— Ի՞նչ առարկէի, չէ որ ինքս էլ յաճախ տեսել էի, թէ ինչպէս որդին գոռում է հօրը վրայ և հայրը խեղճու կրակ՝ արտասուրի է դիմել՝ իրեն մխիթարելու համար:

— Բայս... շարունակեց ծերունին—էդպէս էն, էդպէս... բայց ա՛յ, բան չեմ տակի, եթէ որդիս արժանիք, ինձնից աւելի կատարելութիւն ունենայ և ինձ հրամայի սուս կենալ... Ուրախ էլ կը լինիմ: Գլուխս նրա ոտի տակին կը դնեմ—բայց մէկ իմանամ է, որ նա ինձնից լաւն է, խելօք, կատարեալ... Աշխարհս էլ

հէնց առաջ չի երթալ, թէ որդին՝ հօր վրայ կատարեալ
ցի... իտէնց չի:

—Այդպէս է:

—Եատ ապրես... Ես միշտ մտածել եմ, որ կատա-
րեալ ուսումը մարդուս լաւացնում ա, համա կիսատը՝
լրբացնում:

—Ճիշտ է:

—Ո՛յ, մի երգ էլ ունիմ ասած դրա վրայ.

Լաւ կարդալը, որդեակ սիրուն

կը լինի տանդ մեծ սիւն,

կը տայ քեզ համեստութիւն:

Կիսատ կարդալը, որդեակ անպէտք,

Զի թողնիլ ոչ մի լաւ հետք,

կը դարձնի քեզ լիրը անտուն...

—Լաւ չեմ ասել... Յետոյ աւելացնում եմ թէ՝

Սւելի լաւ է մնալ տգէտ,

Քան ուսանիլ կիսատ, անպէտք:

—Դու երեխ շատ այդպիսի գրուածքներ կ'ունե-
նաս:

—Ունիմ: Բոլորը գրել եմ տուել մի տետրակում...

Հիմի ճաշի ժամանակ է, թէ արժան կը համարես, վեր
կաց գնանք մեր տուն, համ կը ճաշենք, համ էլ կասեմ
քեզ բոլորը:

Ու ոտքի ելաւ: Լոռւթեամբ թել բռնեցի և սկսե-
ցինք իջնել դէպի հրապարակը, որից յետոյ էր ջրաղացի
առունք:

Կոյրի յաճախ իմաստուն խօսակցութիւնը հաճոյք
էր պատճառում ինձ երևում էր, որ մարդը աշխարհ
էր տեսել, այլև իր 10 տարուայ կուրութեան ընթաց-
քում, ինքնամփոփ խորհրդածութիւններով հասել էր
այն ամենին, ինչ որ ժողովրդի իմաստութիւնն է ար-
տադրում:

Ճանապարհին նա քիչ խօսեց: Հրապարակից անց-
նելիս, նկատեցի թէ ինչպէս գիւղացիք հետաքրքրու-

թեամբ մեզ էին դիտում, ակնարկներ անում միմեանց և ժպտում:

Երբ անցնում էինք Գալօի խանութի առջևից, որ դին, որ նստել էլ նստարանի վրայ, հեղնող ժպիտով մեզ նայեց:

—Ընկերս գեռ այնտեղ է, հարց տուի նրան, դին նետանը ակնարկելով:

—Ռ' չ, ասաց նա—նոր դուրս եկան խմբովին և վարժապետի մօտ—այդկողմը գնացին:

Կոյրը, քիչ անցնելուց յետոյ, թեքուեց դէպի ինձ և ցած ձայնով ասաց,

—Հիմի մինչև երեկոյ կը լակեն, յետոյ կը սկսեն կռիւ, զալմազալ... ափսոս ընկերդ:

—Կ'ուզարկենք, կը կանչենք նրան:

—Հա, թող գայ. ի՞նչ նրանց ընկերն է: Մենք էլ օղի, գինի ունենք ճաշին, բայց դէհ, քանի ես ող եմ, իմ տունը հարբեցովի երես չի տեսնիլ...

Հարբեցովը ոնց թէ մի խող աղտոտ,

Ցեխի մէջ թաթախում է ձեռք ու ոտք.

Դնչովը լիստում ա ցեխը

Գլմի տեղակ դժուկն ա դառնում տրեխը:

—Այդ էլ քոնն է:

—Իմն է. ես ուրիշի գրածները չեմ ասում: Լսիր մնացածը... Առուն հասանք... Դէ լաւ, ջաղացի տակն ա կարմունջը, բայց նեղ ա, դու անցիր. հիմիկանց դէն ես մենակ էլ կարամ գնալ. սովոր եմ... Դու լսիր մնացածը.—

Թէ ուզենայ մի խօսք ասել,

Կ'ասես իշխ ձէնն ես լսել.

Վայ թէ քէֆին ես կպել...

Բերնի ցեխը վրադ շուռ կը տայ:

—Այդ տողը չեղաւ, բարեկամ, ժպտեցի ես.

—Հա, գիտեմ... Արտիցը գալիս ուրիշն էի մտածում գտնել. բայց դու ռաստ եկար... վնաս չունի,

գիշերս պառկելիս կը դանեմ... Հիմի լսիր վերջն
կտորն էլ.

Հարբեցողը ոչ տուն ունի, ոչ ընտանիք.—
Որտեղ գինի—ընտեղ նրան հարսանիք,
Մարտիրոսը, ճիշտ է, գինի խմել էլ գիտէ,
Բայց չի կորցնում մարդկային իսկ արժանիք...

V

Հաղիւ անցել էինք առուից և պտոյտ էինք գոր-
ծում ինչ որ քարակոյտերի առջեից, որ ոչշատ հեռու
լսուող մի աղմուկ՝ կանգ առնել տուաւ կոլրին:

—Թօ... կանչեց նա վախեցած—կոիւ ա. կասես
մեր տան կողմերումն ըլի, մեր տղերանց ձէնն ա...

—Զեր տունը այդքան մօտ է:

—Հա. Էս երեցողը աղբօրս—Յաբէթինն ա, յետոյ
մերը... Հլա մէկ շուտշուտ զնանք:

Մտատանջ ու վախեցած՝ ծերունին թէւ խփում
էր պատերին, գայթում էր յաճախ, բայց շատապով ա-
ռաջ քայլեց:

Թիչ յետոյ կանգ էինք առնում մի երկյարկ շի-
նութեան առաջ, որի մօտից, դէպի վտակն էր վուում
ընդարձակ, ծառազարդ և սիրուն պարտէզների մի
շարք: Յիրաւի, ծերունին իրաւունք ունէր, առուի այս
կողմերի հողերը շատ աւելի լաւ ու բեղմնաւոր էին ե-
րկում:

Այդպէս էլ էր: Սարօյենց ցեղի բռնած կողմը,
հրապարակից սկսած դէպի վեր՝ տարօրինակ կերպով
տները զօւրկ էին պարտէզներից, մինչ այս կողմը լիքն
էր ծառաստաններով ու ջրերով:

Բայց երկար չկարողացայ շուրջս զննելով զբաղ-
ուել, որովհետեւ կոյրի տան առաջ տեղի էր ունենում
մի այլանդակ տեսարան:

Խանութի ետևում խմող—արբեցողների խումբն
էր ամբողջովին այնտեղ և դեռ մի նոր դէմք էլ աւելիս

10—15 հոգի, բոլորն էլ արբած, երերուն, աղմկաւլից խօսող, միմեանց չհասկացող—ժողովուել էին ինչ որ գերանների կոյտի առաջ և աղմկում, կանչուտում էին:

Անտառապահը, վարժապետը, նոր դէմքը—որ, ինչպէս տեղեկացայ, Զաւադի եղբայր տանուտէրն էր—խառնուել էին իրար: Անտառապահի դէմը կտրել էր վարժապետը և ճգնում էր համոզել նրան, իսկ Զաւադի եղբայրը կանչում էր.

—Ինչի, ախալէր, փէտ են գողացել, թող պրատակօլ շինուի... ուր էք ողջ գիւղը ձեր կրակովը էրում...

—Աստա՛վ, Ալէքսէյ, նու... համոզում էր ուսուցիչը:

—Ինչու գողացած, գոռում էր մի երիտասարդ, որ կոյրի որդին էր—էս փէտերը ես առել եմ, առել...

—Աստուած գլխիդ քար դցի, Գրիգոր, ձայնում էր մի պառաւ էլ հեռուից—տհւնդ գլխիդ ընկնի, բաս միակ մեզ տեսաք...

Միւս գիւղացիք լրջապատել էին, իսկ Զաւադը, չարամիտ քրքիջը բերնին, ընկերիս մի կողմն էր բաշել և ինչ որ բան էր բացատրում տաքութեամբ:

Երջակայ տանիքներից, փողոցի անկիւններից, Գալօփ պատշգամիթի լուսամուտից՝ դուրս էին ցցուել գլուխներ. կին, մանուկ, տղամարդ՝ կիտուել էին ամեն կողմ:

Եւ ամբողջ այդ աղմկող խումբը այնքան հարբած էր, որ իրար վրայ էր ընկնում, առանց միմեանց լսելու գոռզուում, վիճում:

—Սա ինչ ա, տօ... առաջ քայլեց կոյրը բարձրածայն կանչելով—Յակոբ, այ տղայ, Արամ, դա ինչ ա, ի՞նչ ա եղել...

Ամունուն տեսնելով, ճշացող պառաւը մօտ վագեց, բռնեց թեիցն ու ասաց.

—Ի՞նչ պիտի լինի, տնաշէնի մարդ. հրէն, Սարօննք մտտնել են, պահապահնն էլ եկել՝ պրատակօլ ագրում...

—Ո՞նց թէ պրատակօլ, ինչի...

—Փէտերի համար... էն նոր բերած տախտակաւ

ցուների... ասում ա՛ գողացել էք, ծածուկ բերել. եա
10 մանէթ կը տաք, եա թէ չէ փէտերն էլ տանում եմ
ու ձեզ էլ դատաստանի քաշ տալիս...

—Բօ... բա ըտէնց բան կ'ըլի, արեց կոյրը—ինչի,
մենակ մերը տեսաւ... ես էդ օձ Գրիգորի հօրը... տօ
մէկ դէնը կացէք տենամ... Ուր ա արէշչիկը, վարժա-
պետն ուր ա...

Ասաց, հրեց իր դէմը կեցողներին ու քայլեց դէպի
գերանների կողմը, որի տեղը նա լաւ դիտէր և դուշա-
կում էր թէ նրա շուրջը պիտի կենտրոնացած լի-
նէին աղմկողները:

—Հա, հրէս եկաւ Մարտիրոսը-ինքը, նկատեց տա-
նուտիրոջ օգնականը—հա մէկ արի, Մարտիրոս, էս ուր
ա քո աղէն մէշիցը ծառեր գողացել բերել։

—Ադա ինչ ես հաջում, ճշաց նրա վրայ կոյրը—
անց թէ գողացել... մէկ գնանք քո տունը, տեսնենք
դաւ ես մէշէն՝ (անտառը) դարտկել-բերել, թէ մենք...
ուր ա արէշչիկը։

—Լստեղ եմ, յառաջացաւ դէպի նա երերուելով
անտառապահը—դու... էս փէտը պրօտօկօլ, տասը մա-
նէթ...

—Ո՞նց, տասը մանէթ... տօ ես քեզ նման հար-
բանին տասը սիլլա (ապտակ) կը տամ որ քիչ խմես...
ինչի, բիլէթ չոնիմ, փէտ բերելու ինձ իրաւունք չկայ...
—Ունես... էս փէտը... դողացած ա, ես... ես
կտրել էի Սարօենց համար... ը՛ըմ... եանի ինձ հա-
մար...

—Տօ ի՞նչ ես դուս տալի. լաւ տեսել ես փէտը,
թէ էս խլէդ քեօխպին ես ականջ գնում. եա թէ չէ
փնդդ ա պակասել ու մարդ չդտար գեղումը...

—Ադա քու, քու... մէջ ընկաւ տանուտէրի օգնա-
կանը, մի լիրը ծիծաղ դէմքին—դու որ չես տեսնում
գերանները, մենք չենք տեսնում... էլ ուր ես ուշունցի
(հայհոյանք) տանում բանը... էն ա, ասա որ գողացել-
բերել էք, հանիր մի ոսկի կոխիր ձեռքը, փէտն էլ ետ

տուր տանենք՝ պրծնի-գնայ էլի՛... ուր ես կրակը մեծացնում...

— Տօ չոռ ու ցաւ կը տամ... կը տամ որ տանէք...

Վարժապետը, որի աչքերը փոքրացել, բայց ճշգնում էր զսպել իրեն և տեղն ու տեղը կանգնած՝ օրորում էր, շրթունկները պրկում, ձեռքի փայտը ամուր կոխում գետնին, ճակատը կնճռում և աշխատում էր խիստ կերպարանք ստանալ—փորձեց միջամտել:

Եւ երբ կոյրը, տանուտէրի օդնականն ու անտառապապահը՝ գրեթէ երես-երեսի մօտեցրած, ոտների վրայ լարուած, երեք աքաղաղների պէս ճշում էին, նա ձեռքը Յ-Գ անգամ թափահարեց, գահավիժմամբ առաջ նետուեց, երկու թեւերովլը լայն շարժում գործելով ետ մղեց շըրջապատողներին, մտաւ աքաղաղների մէջ տեղ, ուժգին հրումով հեռացրեց նրանց միմեանցից ու գոչեց.

— Եաւաշ... եաւաշ ասում եմ ԷԷ... եաւաշ ես էլ ասեմ... Դու, Ալէքսէյ, պաշօ՛լ (կորիք)... հեռու գնա... Լուէնց: Դու էլ քեօխվա, ոէխդ քեղ քաշիր ու եալլա, գէնը... Լուէնց... Հիմի դու, ամի, ինձ լսիր...

— Ինչի՞ «եալլա դէնը» ձայնեց ոտների վրայ ցցուելով քեօխվան—եանի ուզում էք որ ցէպս *) կախեմ... եա... եա թէ չէ... Ադա ուր ա գզիրը... Շան որդի Սահակ, էդ ուր ես կօրել...

— Տօ սուս ԷԷ... սուս մէկ, կանչեց նրա վրայ վարժապետն ու ոտները լայն-լայն գնելով ճգնեց հաւասարակշռութիւն ստանալ՝ չօրորուելու համար: Յետոյ, կուրծքը ցցեց, գլխարկը պինդ կոխեց գլխին, դէմքը կնճռեց ու ասաց.

— Ո՞ւր ա Զաւադը... Հա, ըստեղ ես... Լաւ, այ ամի, խօ տեսնում ես էդ շան որդի կաղին... խօ տեսնում ես... Լաւ նայիր... չես տեսնում. ի՞նչ ա, աչք չունես... թիւ ես դրա... էս ամէնը դրա բանն ա.. էս խեղճ աբէցչիկը սկի էլ չէր իմանում, որ ձեր Արամը

*) Գիւղապետական նշանը, շղթան:

փէտ ա բերել. գեղն էր եկել որ Բախչիենց Մուրադի գողացած փէտերը բռնիւ Դէ՛, Զաւադի բարեկամն ա ախր, խօ գիտես... Հը՛մ, ինչ ա, որ նրանը մոռանայ, սրան շուռ տուաւ դէսը... Ամա, բայց որ...

— Համար միջահատեց նրան կատաղութեամբ կոյրը — ուր ա էդ շան որդին, էդ, էդ...

Ու փայտը բարձրացրեց:

— Փի՛է, փի՛է... կանչեց հեռուից Զաւադը վախեցած — տօ, էդպէս շառ կը լինի... չես ամաչում, վարժապետ...

Յետոյ մէկէն, վախը փոխելով յանդզնութեան, կամ, աւելի ճիշտն ասել, վախն աւելի սաստկանալուց, մի քայլ առաջ նետուեց ու ահաւոր ճիշով կանչեց.

— Տեսնում էք էս շան ցեղը, էս շմն... այ ես ձեր... այ ես ձեր...

Ու միմեանց ետևից, կարճ փայտը ցցած, կաղոտւքի վրայ լարուած, կոկորդը պատուելու չափ ճշալով սկսեց նա այնպիսի հայհոյանքներ, այնպիսի լկոտի բառեր, որ լսողները խառնուեցին իրար, վարժապետը երկու ձեռքերով ականջները փակեց, անտառապահը ապշած՝ ետ քաշուեց, իսկ ընկերոս բերանաբաց մնաց...

Շարունակելով կաղիկը ամենքի ճայնի վրայ իշխող աղաղակներն ու հայհոյանքները, վախից գունատ, սոսոկումով լի աչքերը, նա կամաց-կամաց ետ քաշուեց, ապա թքեց և սկսեց հեռանալ դէպի առուն: Այնտեղ, փօխանակ կամուրջից անցնելու — երկար կօշիկներովը մտաւ ուղղակի ջրի մէջ, այնտեղից էլ դարձաւ, էլի ճըշաց մի բոպէ, առուի միւս կողմն էլ մի վայրկեան մեղնայելով հայհոյեց և անհետացաւ...

Մի բոպէ ամէնքը լուռ էին, յետոյ յանկարծ մէկը քրքչաց, ապա ծիծաղ երևաց բոլոր դէմքերի վրայ, իսկ կոյրը, փայտը ցած թողնելով՝ սսաց.

— Ըմ ես քո վախսկոտ հոգոււդ...

Այնուհետև մէկէն աղմուկն իջաւ, մարդիկ սկսեցին ցրուել, մնացողները հանդարտ, համողիչ կերպերով գեկտեմբերը, 1904.

շրջապատեցին անտառապահին, և չէր անցել հինգ րոպէ, որ տանուտէրի օգնականը անհետացել էր, իսկ վարժապետը անտառապահի թեղ մտած, կոյրի առաջնորդութեամբ, ետևներիցը մենք էլ, մտանք մի ընդարձակ սենեակ, ուր շուտով սփռոց փոռւեց և երևաց շիշերով օդին և գինին...

— Լտէնց հա... ձայնեց վարժապետը — այ, հիմի լաւ ելաւ... Տօ ինչ դողացած փայտ, ինչ տանուտէր... ողջ գեղը, բոլոր գեղերը դողանում են... Դու գինի ասա, գինի... խմենք, Ալէքսէյ, կը չօրտու¹⁾ պրատակօլ մրատակօլ... ինչի, դու չե՞ս իմանում որ մէկը հէնց ինըը տանուտէրը ողջ անտառը թալանումա ու տարեկան ինչքանի տախտակ ա ծախում... նա՛, վազմի՛, պէ՛յ (ա՛ռ, խմիր)... Քո կենացը, Մարտիրոս ամի...

Եւ երբ սկսել էինք ուտել, կոյրը որ լուռ և գունատ, պատառներ էր շինում, երկար վնօսելուց յետոյ՝ մէկէն ինձ գարձաւ և խուլ ձայնով ասաց.

— Մարդիկ կան, պարճն եղբայր, որ ծնուելու օրիցը հէնց՝ իրանց տեղումը չեն ծնում, ուրիշ տեղի վայել են, բայց բախտը նրանց ցեխի մէջ ա բերել-քցել... Մարդիկ էլ կան, որ ծնած օրիցը շան կաթ ծծածի պէս շուն են ըլում, բայց բախտը նրանց մարդկանց մէջ ա բերում — քցում... Ուր ես եկել մեր գեղը, ափսոս չես... Ա՛ռ, առ միւմի բաժակ էլ մենք խմենք, բեալքի թէ մի բիչ անասունի նման մենք էլ կարողանանք մտածել, թէ չէ՝ մարդու պէս ապրելը մեր բանը չի... ու տեղը չի... Լտէնց չի, վարժապետ...

— Թո՞ղ, թո՞ղ, ամի... խմեց վարժապետը տխուր, խիստ տխուր դէմքով — խմենք, խմենք որ մոռանանք, թէ չէ՝ մարդու պէս չի ապրւում, չէ...

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

*) Մատանային թող գնա, թող գրողը տանի: